

ՀԱՅԱՍՏԱՆ

Ի Ր Ե Գ Ի Ր

ՔԱՂԱՅԱՐԱՆ, ԵՊԻՍԿՈՍ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԵՌԵՒՏԻԱԿԱՆ

Տարեկան գին կանխիկ զուգուշ 100 :
Այս Լրագիրը ամեն երկուշաբթի օրերը կը հրատարակուի :
Պոլսէն գուրա գացած Լրագիրներուն փոխարին ծախքը տուողին ջրաց է :

Իր շահին համար չուր մը հրատարակեց ու զոգը դիտի ջնարի տուին 40 փարայ :
Լրագիրը գրող ծանուցումը ձրի է :
Դուրսէն եկած նամակներուն փոխարին ծախքը իրկողը դիտի ջնարի :

ՔԱՂԱՅԱՐԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕԼԻՍ 18 ՅՈՒԼԻՍ

— Սայրաքաղաքիս շուկայն՝ խառնաճրկար պալի բաւաւ տեղը, մէկ նոր խառնաճրկար մը շինուեցաւ . որ կայսերական գործարանը շինուած զանազան տեսակ կերպաներ հոն պիտի ծախուին : Սայրաքաղաքին շէնքն ալ վայելուչ եղաւ . տեղի ալ շուկային բազմամարդ տեղերէն մէկը ըլլալով՝ երբեմն երբ որ վեհափառ ինքնակալը բարեհաճի նէ հոն նստելու . և անցնող դարձողները տեսնելու համար յատուկ տեղ մըն ալ շինուեցաւ . և յիրաւի ինքնակալը անցած չորեքշաբթի օրը շուկայն ելած ըլլալով բարեհաճեցաւ հոն գալու . և քիչ մը ժամանակ նստուելու : Այնչէս ելլելէն ետքը սերտաբերին դրանը կողմը գնաց . և բարձրապատիւ սերտաբեր Սուլթանօղլու վրէժապետին յատկապէս նոր շինել տը ված հովանոցը նստաւ . որ վեհափառ ինքնակալին համար շինուած է :

— Ուրիշու կառավարիչ մեծարդ Շիրաքլի իշխանը վեհափառ ինքնակալին քանի մի պատուական և մեծագին ձի ընծայ իրկեց : Այս ձիերս մօտերս կոստանդնուպոլս հասած ըլլալով չորապանի արքայական պալատը տարուեցան . ուր տեղ վեհափառ ինքնակալը ասոնք աչքէ անցնելով վեց հատին հաւնեցաւ . որ իրենք յիրաւի հաւանուելու բաներ ըլլալէն զատ՝ շատ փառաւոր զարդերով ալ զարդարուած էին . և կայսերական արտուր քաշել տուաւ : Ուրիշու իշխանին կողմէն այս ընծայները կոստանդնուպոլս բերող Պ. Կալինեքոն ալ վեհափառ ինքնակալին ներկայանալու արժանացաւ . որ շատ մարդասիրութեամբ ընդունեց զինքը :

— Իմացուած է որ, Ուրիշու արտամարտիչը զսպելու համար Ուրիշու մանուր ուսաց զորապետը Պ. Տիւհաճէլ երկու կամ երեք ամիսէն Պետք բուրք պիտի դառնայ . և անկէջ ետքը Պետքէջ ուսաց տեղութեան կողմէն զինուորական գործակալ պիտի չի մնայ . այլ միայն ընդհանուր հիւպատոս (քոնսլ) մը : Այնչաճեքը այն կողմերը զբուրուեցաւ որ՝ Սուլթան ճէնեօսլը զորաց ընդհանուր վարժութիւն մը ընել տալէն ետքը միայն ձիււոր զորաց հրաման պիտի ըլլայ որ Ուրիշու երկրէն ելլեն , բայց անկէջ ետքը իբրեւ ստաց հրաւարակուեցաւ որ միայն ձիււոր զօրք չէ , այլ ուսաց բոլոր զօրքը պիտի ելլեն իրենց երկիրը դառնան :

— Այնչաճ չորեքշաբթի (յուլիս 5), աւսդրիական լոյս ընկերութեան օրինակէն անուան շաքենաւը Սէլանիկի գնաց , Սէլանիկու կուսակալ բարձրապատիւ Քիզա փաշայն կոստանդնուպոլս բերելու . որուն համար անցած շաբթու ծանուցիւք որ իրեն հիւանդութեանը դարման տանելու համար կուստանդնուպոլս գալու հրաման ուղած և առած էր : Երկուշաբթի օրը յուլիս 10 , բարձրապատիւ փաշայն կոստանդնուպոլս հասաւ :

— Այնչաճ չորեքշաբթի (յուլիս 5) , կէս օրվան ատենները մէկ ահագին փոթորիկ մը եղաւ կոստանդնուպոլս . կարկտախառն անձրեւով : Կարկուտը խիստ մանր էր , ուստի վնաս մը չի պատճառեց : Իրարու ետեւէ երկու անգամ ամպ գուպուրն ահագին ձայները տուներուն որպէս թէ հիմունքը թնտացուց , և կայծակներուն փայլու-

թիւնը ահաւոր տեսարան մը կ'ընծայէր : Քանի մի տեղ կայծակը զարկէր է . և յանուանէ կը զբուրուի Պէյօղլուի թէքէին կողմերը , և թօփխաւ նէր կողմերը . բայց գոհութիւն աստուծոյ , մարդու վնաս ըլլալ չի լուեցաւ :

— Ներքին յուլիսի 6ին (յուլիս 24) կոստանդնուպոլսյ խառնաճրկար կը գրեն . Բարձրապատիւ Սուլթան փաշայն բաւական զօրքով և վեց կըտոր լծիկանօղլով քաղաքս հասնելէն քիչ մը ետքը Սուլթան կառավարութեանը առաջարկեց և հաստատուեալ խոստում առաւ որ , սահմանագրութիւններ աղէկ պահպանեն , ապառաժ պուլլարները ներս չառնեն : Այնչէջ ետքը այն գլխէ ելած և ապառաժութիւն խորհող պուլլարները յորդորեց որ իրենց պարտականութիւնը ճանչնան և կայսերական կառավարութեանը վրայ վստահ ըլլան . որ ուրիշ կերպ չի կրնար անոնց հետ վարուիլ , բայց եթէ վեհափառ կայսեր բարեխիտ դիտաւորութեանցը համեմատ , որով միշտ յանցաւորներուն ներքեւ աւելի յօժար է քան թէ պատժելու : Վեհափառ ինքնակալին ալ առատագութեամբ բնաւորութիւնը անանկ պահանջելով : Այս մարքս վրայ բոլոր թէ քաղաքական և թէ զինուորական կառավարչներուն և հրամանատարներուն խոստ պատուութիւնը որ իրենք իշխանութեամբ վարուելուն չափը չանցնեն . մարդ չի նեղեն . միայն անոնց վրայ խոստութիւն բանեցնեն , որ իրենց վրայ տիրող օրինաւոր իշխանութեանը դէմ գլուխ վերցնելու և չփութ հանելու մարդով ձեռքերնին դէնք կ'առնեն : Այն պատուէրները իրկեց նստել Վիտինու կառավարիչ Օլիա փաշային : Բարձրապատիւ ըստ պարագետին կապարձակին ալ (եալէրի հարպ) այս մարքս վրայ համաձայն է , և գործն ալ անոր յարմարեցած է . որով կրնամք ըսել թէ բոլոր վին պուլլարներուն ապառաժութիւնը մարեցաւ : Այնպիսի տուիլի Բուրչուլու ըստած վիճակն ալ անցանքերը մէկ պղտիկ ապառաժութեան շարժում մը եղեր էր , այն ալ բարձրապատիւ սպարապետին այս ճամբաս բռնելովն անցաւ : Այնչէր յանցանքի այս եղղները ձեռք անցան կոստանդնուպոլս իրկուեցան : Բարձրապատիւ Սուլթան փաշայն մարդ մը բռնել և բանտը գնել կամ կոստանդնուպոլս իրկել ուղէ նէ՝ առաջիկայ անոր վրայ զբուրուած ամբաստանութիւնը բարակ քննուելու կը ձգէ . և թէ որ յանցաւորութեան հաստատուն աստացոյցներ ունենայ նէ այն մարդը բռնել կուտայ . անոր համար բռնուած և բանտը գրուած կամ կոստանդնուպոլս իրկուած մարդոց համարնք քիչ է : Սպարապետին բռնած ճամբան շատ աղէկ է . ամէն տեղի բնակիչներ որ ասոր կառավարութեանը յանձնուած են , վեհափառ ինքնակալին օրհնող և անոր պատուական և անգին կենացը երկարութեանը և յաջողութեանը և փառաւորութեանը համար աղօթող են : Օրաց մէջ զարմանալի բարեկարգութիւն կայ . շուկայներէն ինչ որ առնեն նէ՝ սակարկութե (բաղարըլի) կամ որոշուած գնոյն համեմատ ստակը նշնհետայն կը վճարեն . բնակարանին ալ աղէկ է և աղէկ կը նային : Կարճ ըսեմ . զինուորական բարեկարգութիւնը Լըրոպայի պիտի բարեկարգ և կրթեալ երկրներուն մէջը անգամ ասկէջ աղէկ չէ :

Բարձրապատիւ Սուլթան փաշայն Նիւի բաղար ըսլած գիւղաքաղաքը 16 կտոր թնդանօղով և բաւական զօրքով զինուորական վերին հրամանատարներէն մեծապատիւ Իպրահիմ փաշայն ձգեց . և նոյն զինուորական հրամանատարներէն մեծարգոյ

հաղարապետ Հիւսէին աղայն կոստանդնուպոլս իրկեց պաշտօնական գրեթով . որով կը ծանուցանէ թէ Պոսնայի և պուլլարներու և առնալուաներու երկիրները աղէկ և հանգարտ վիճակի մէջ մը տան : Իսկ մը զօրք չալ մեծապատիւ Վլադի փաշային հրամանատարութեանը յանձնելով Պոսնասէրայ իրկեց . որպէս զի զգուշանան որ խռովութիւն չեղէ : Այսով ամէն տեղ հանգարտութիւնը հաստատուեցաւ . և թէ որ մէկ նոր խռովութիւն մը ելլէ նէ , որ չի յուսացուի , շուտով մը զօրքով բաւական ըլլալու շափ ամէն տեղ զօրք կան բարձր սպարապետի սպարապետին խոհեմ կառավարութեամբ :

— Ժամանակէ մը ՚ի վեր Իտալիէի գաւառին մէջ գողերը սրակաւ չէին , որ գրեթէ գիւղերուն և քաղաքներուն իրարու հետ հաղորդակցութիւն ընելու ճամբան գողեր էին , և առանց բաղձալթիւն ընկերներու մէկ գեղէ մէկալ գեղը երթալու համարձակողին չէ թէ միայն ինչքը , այլ և շատ անգամ կենանք ալ վտանգի մէջ կ'իյնար : Իտալիէի գաւառին այժմու ընդհանուր կուսակալ բարձրապատիւ Խայրէտտին փաշայն մասնաւոր հոգ կը տանի այս գողերս հատցնելու . և ասոր համար ալ ճամբայները պարտաւոր արիւստիւր և հնարագէտ և խոհեմ մարդիկ գրած է . որոց ձեռքէն անանկ գողերուն աղատիլը շատ գոյաւոր կ'ըլլայ : Քիչ ժամանակի մէջ ալ օգուտը տեսնուի սկսաւ . ամէն օր բաղձալթիւ գողեր կը բռնեն Իտալիէի կը բերեն . և բանտը կը գնեն : Այս ճամբով կը յուսացուի որ քիչ ատենէն Իտալիէի գաւառը այս գողերու ձեռքէն կ'ազատի :

— Տիւհաճէլ փաշայի կառավարիչ (միւտիւր) Օսման աղային համար ամբաստանութիւն ըլլալով , որպէս թէ շատ մարդու զրկանք կ'ընէ . և բանը ստուգվելով , բարձրապետը զբռնէն հրովարտակ գնաց որ արքայուր , և երեք տարի արքայը կենայ : Օսման աղայն Իտալիէի կուսակալ բարձրապատիւ Խայրէտտին փաշային խոստացաւ բանտը կեցած տեղէն , մինչև 100.000 զուգուշ տալու թէ իրեն և թէ սպասաւորացը որ արքայէն աղատի : Փաշայն հաճութիւն յըցնելով ստակը բերել տալէն ետքը Օսման աղայն քաղաքական ժողովն առաջը կան չէլ տալով՝ կաշառքով զինքն ալ բռնելու աշխատիլը երեսը տուաւ . ստակն ալ խորհրդակախաց առաջը թափելէն ետքը հրամայեց որ բարձրապետի գրան հրամանը նոյն հետոյն ՚ի գործ գրուի :

— Յարգապատիւ Վլադի Նիստուէֆէնտին ժամանակէ մը ՚ի վեր մեծապարտութեանը կողմէն իրկուած էր , որպէս զի եւրոպացուց ստացուածը ըլլալով անոնց իրենց կնոջը կամ ուրիշ մօտաւոր կնիկ մարդոցը անուանը վրայ եղած տուներուն ըստ արդարութեան տուրք ձգէ : Այս բանին վերաբերեալ քանի մը կարեւոր գործերու համար այս յարգոյ պաշտօնակալը անցանքերը կոստանդնուպոլս եկեր էր : Հիմա կոստանդնուպոլս այս գործը ըմբոստացած ըլլալով վերստին իրկուի պիտի գտնուի . և Պուլլաղ ալ պիտի հանգալի Պ. որը Լամարգինը տեսնելու , և մեծապարտութեանը անոր ընծայուած գետնին սահմանը որոշելու համար : Իրկուած մէջ ասոր գործը շատ փառաւոր մը ըլլալով ալ Վլադի Նիստուէֆէնտին անանկ խոհական կերպով մը վարուեցաւ որ բոլոր եւրոպացիք իրմէ գոհ են . ուստի Պ. որը Լամարգինին հետ ալ այս գործոյ համար տեսնուելու ասկէջ արժանաւոր մարդ մը գոյաւոր կը գրուի :

— Ինկիլիզի պատգամաւորաց խորհրդարանին

անդամներն Պ. Ալբրեհտը՝ ատեն մը առաջ
կոստանդնուպոլիս եկած և քանի մի տարի հան կե-
ցած ըլլալով մեծագոր տերութեան կառավարու-
թեանը աղէկ տեղեկացած էր, և ինկիլթեռա
դառնալէն ետքը քանի մի կտոր գիրքեր հանեց
տաճկաստանի վրայ, որ մեռնող Սուլթան Սահ-
մուտ ինքնակալին ժամանակը տաճկաստանի ունե-
ցած վիճակը ձիշտ հաւատարմութեամբ կ'ոտո-
րագրէ. և այս գիրքերը այնքան յարգաւ թիւն ըս-
տացան որ՝ արեւելքի գործերու պարտադր սակն
մարդիկ այս գիրքերս մէկ մը աչքէ անցնելը հար-
կաւոր սեպել սկսան։ Ալբրեհտը (Օսմանեան մե-
ծագոր տերութեան վրայ զգուշ մարդ սլմէն լրտա-
նին ճշմարիտ կարծեալով ասուտ ու փութ և այլ ընդ-
այլը կարծիքներ ստացած էին. այս երկու երկն
ցաղադէտը այն կարծիքներուն տուտ ըլլալը հաւ-
կըցուց անանկ բաներ պատմելով, որ այն ծուռ
համբաւոյն հետ չի կրնար միաբանիլ։ Սորո այս
արդիւնքը մեծագոր տերութեան բարձրագոյն
պաշտօնատէր նախարարներն ալ գիտէին։ Այս օ-
րերս Պ. Ալբրեհտը Արտոսի գետի եկաւ, և
անցած շաբթու գրեթէ բոլոր նախարարներուն
հետ տեսուի ընելու գնաց, որ շատ աղէկ յարգու-
թիւն և պատիւ ցուցուցին այս երկու անձինս։

— Արտոսայարգ Սուլթան արայն Սրդան
քէօյի կառավարիչ անուանեցաւ։

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ։ Ինչպիսիք քաղաքը կառավարու-
թեան գէժ ապստամբներու գաւազնութիւն մը
յայտնուեցաւ մայիս ամսոյ մէջ։ Ինն հազի մէկ
մը ձեռք անցան և հրապարակաւ գլխատուեցան.
և այսպէս իրենց արժանի պատիժը կրեցին. իրենց
պատճառները քաղաքական պատերազմին մէջ թա-
փուելու անմեղ արիւններուն տեղը իրենց արիւ-
նը թափուեցաւ։

Խորասանի ապստամբութեան գլուխը Սալոր
խան, որ երկար ժամանակ իր ապստամբութեամբ
բը էփ աղէկ վնաս հասցուց պարսկի կառավարու-
թեանը, իր մտաւոր ազգակցին Սուհաբեդ շա-
հին գէժ գլուխ վերցնելով, և մինչև հիմալուան
թաղաւորին օրը երկնցնելով, և շատ մարդոց
մահուան պատճառ ըլլալով և իր հայրենի երկիրը
ձեռքէն եկածին չափ քանդելով և աւերելով, վեր-
ջապէս բռնուեցաւ. և դատաստանական վճռով
հրաման եղաւ որ առաջ աչքերը հանեն և ետքը
գլուխ կտրեն. և այս հրամանը կատարեցաւ։
Տեղ կայ որ՝ ապստամբութեան ոգին մարելու հա-
մար մահուան պատիժէն զատը օգուտ չընէր։ Սա-
րսիայի տերութիւնն ալ ինչպէս որ պատմած եմք,
քաղաքական յանցանաց գէժ մահուան պատիժ տա-
լը նորոգեց։

ԵՐԵՎԱՆԻ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԱԽԱ։ Փարիզու ոտականութեան գլուխը
Պ. Քառլէ, ամէն օր մէկ մէկ կողմէն ուսմիւ-
պետականներու դաւաղութիւններ կը գտնէ և
երեւան կը հանէ. ըսել է որ կ'սլոնացնէ. որով
հետեւ ասանկ խորհուրդները ժամանակէն առաջ
երեւան հանելը ոչնչացնել ըսել է։ Վիէն օր մէկ
մէկ նոր բան երեւան կ'ըլլէ. երգուստը ընկերու-
թիւններ կը գտնուին. զըսել եղողները կը բըւ-
նուին. տունները կ'սխալով շատ պատերազմական
պատրաստութիւններ և ապստամբութիւն խոր-
հող մարդոց անունի ցուցակներ կը գտնեն, որոց
մէջ նշանակուած մարդիկը կը բռնեն և բանտը կը
գնեն։ Սով Փարիզու մէջ այս խառնարարներուն
իրարու հետ հաղորդակցութիւնը, որ ազատ մը-
նար նէ ֆռանսըզի երկրին և բոլոր ազգին փառ-
սլիտի ընէր, հիմա իրենց վնասգաւոր եղաւ. և
վիէն ալ երաւ որ՝ այն օտարականները որ մէկ գործ
մը չունին Փարիզ, և իրենց ընթացքովը կատարած
կուտան, Պառնասայի սահմաններէն դուրս հան-
ուին։ Իսկէց առաջ ասոր վրայօք խօսք քանի մը
անգամ եղած էր, բայց վերջնական վիճիւ մը արը-
ուած չըլլալով գործողութիւնը թոյլ էր։

Ասոր վրայ Հռոմայու օսկո-լարօն լրագիրը
գաղղիական վառ րը վիէնէ օրագրէն տունելով
կ'ըսէ. Օւլիցիցերի գանաւող ֆռանսըզ հասարա-
կապետականները և ուսմիւպետականները Փարի-
զու մէջ խռովութիւն ելելէն յոյսերին կտրելով
իրենց անխիստական ձգուելը և ջանքը բոլորովին
Ինկիլթէի (Պառնասայի թագաւորութեան) վը-
րայ դարձուցին, որ տեղ որ Սաքսոնի շատ թըղ-
թակիցներ ունի։ Այս երկրիս խորագին մարդոց
թելադրութիւնը թէ՛ ուսմիւպետ մէջ և թէ՛ պարզա-
միտ կամ չարամիտ երեւելեաց մէջն անգամ շատ
կը բանի. ուստի այս տեղի խաղաղութիւնը կար-

ծուածէն աւելի ծանր վտանգի մէջ է։

— Պառնասայի Օտ բաժնին Քօնք վիճակին պա-
հապան զօրքը հասարակապետական կառավարու-
թեան հաստատութեան տարեդարձին օրը (մայիս
4) հանդէս ըրին, և հանդէսին մէջ՝ ինչչէ ասմիւ-
պետական և ընկերական հասարակապետութիւնը խօսքերը շատ
անգամ լսուեցաւ մէջերին։ Հասարակապետու-
թեան նախագահը Սուլթան Քառլէն նախարարաց
հետ խորհրդակցելով, և գիտեալով իրաւ պէտք
եղած տեղեկութիւնները առնելով վիճիւ հանեց որ
Քօնք վիճակին ազգային պահապան զօրաց խուժ-
բը ցլուի և վերստայ։

— Փարիզու շրջակայ գեղերէն մէկ մեքենագործ
մը իրեն գործարանին վրայ թուղթ փակցուց. ու-
րուն մէջ կը ծանուցանէր որ, ով որ ուսմիւպետա-
կանաց ժողովքը կ'երթայ նէ, թէ որ իր գործա-
րանէն է նէ անկալ կը վրձնաւ. թէ որ չէ նէ՝ իր
գործարանը չառնէր։ Այս պղծիկ օրինակէս կ'ե-
րեւի որ՝ հասարակութիւնն ալ հասկըցած է ուսմի-
կապետ սկսններուն դրութեանը գէշ և փաստակա-
րաբար, ուստի շատերը մէկ մէկ կերպով կը ջանան
ստանք տկարացնելու։ Կառավարութիւնը ասոնցմէ
սեւ շունելով երկիրը հանդարտ կրնայ պահել. և
դուրսի ուսմիւպետականները, որ փնչէս որ ը-
սինք, Փարիզու մէջ խռովութիւն ելելէն յոյսեր
նին կտրած էին, չէ թէ հասարակապետութեան
նախագահէն կամ Հռոմային գորապետին քա-
ղաքներէն և գայը աշտընութեանէն կամ զինուոր-
ներուն կարգապահութիւնէն համ զինուոր-
այց հասարակութիւնը իրենց գէժ ըլլալու սկսե-
լէն վարկաւոր յոյսերին կտրեցին։ Այսու ամե-
նայիս Պառնասայի վիճակին վրայ կատարեալպէս
ապահով ըլլալու տակաւին շատ բան կ'ուղէ։

Սորին Սուլթան (Պառնաս) բաժնին Սալան
սուքաղաքին մէկ կողմը պատի մը վրայ խոշոր գը-
րիւով գրուած թուղթ մը փակած գտան. սրուն
վրայ գրուած էր. տուրքերու ցուցակը շինուած
ստանք սահմանագրութիւնը աւրուեցաւ. և ա-
սանկ օրինագանց կառավարութեան մը՝ հնազան-
դելու ասկէց ետքը չեմք Պարտաւորիւ։ Թող աս-
կէց ետքը Պառնասայի մէկ ծայրէն մէկալ ծայրը՝
կառավարութեան հակառակելու համար մէկ այս
ձայնս լսուի. քոնք չեմք քոնք։ Այս պատմող լրագի-
րը կ'ըսէ. շատ աղէկ կ'ըլլար որ այս խորատու տու-
ղը իր խօսքին տէրը ըլլալով գրածը ստորագրէր. և
վերջապէս խօսքը ինչ յայտին խօսքով ուրիշնե-
րուն օրինակ ըլլար։ Իսկ թուղթը վերցաւ,
թուղթը գրողը փնտրուեցին և տակաւին չի գը-
նուեցաւ։

Այսու ամենայնիւ Սօք է Վառն բաժնին քա-
նի մը տեղերը քանի մը մարդիկ քոնք չեմք քոնք խօ-
քը բանեցնելու համարձակեցան. յուսալով որ այս
խօսքը լրագր իրենց ձայնակից կ'ըլլայ։ Իսկ քանի
հազի ասանկ ըսել սկսան նէ այնքան մնացին. ու-
րով խաբուած ըլլալին հասկըցան. և կամայ մը
իրենց տեղը քաղաւեցան։

Ի խնի քոնք քոնք և ինչպիսիք ըսուած արուար-
ձանները և նոյն իսկ քաղաքին մէջ քաղաքական
յայտանքով շատ մարդիկ բռնուեցան. որ գաղը-
նի ընկերութիւններուն անգամ գրուած էին։ Սու-
կէց առաջ Տըրահտ անուն մէկը որ հիմա Պառն-
ասայէ դուրս փախստական է. գաղանի ընկերութեանց
վրայ տեղեկութիւններ հրատարակած էր. որ հետ-
քըքրական գրուած մը ըլլալով շատ մարդիկ կար-
գացիր, և գաղանի ընկերութիւնը ինչ ըլլալը հա-
կըցիր էին։ Սով գաղանի ընկերութեանց յարգը
շատ կոտորած էր. բայց տակաւին աղէտ և ար-
ուեստաւոր անձինք կը գտնուէին ասոնց անգամ
գրուելու։

— Փարիզու մէջ կեղծ դրամաթուղթ (քաղ-
քայմէ) հանող քանի մը հազի կերպով մը ձեռք
անցան. և խօսել տալով իմացուեցաւ որ՝ ասոնք
ըրած ծախքերին հանելու և իրենց ալքիչ մը ար-
ուեստ ձգելու բաւականին չափ թուղթ հանե-
րեն. անկէց աւելի հանելու միտը չունին եղեր. և
հանած թուղթերին միայն 150,000 ֆռանքի
թուղթ է եղեր. (որ կ'ընէ 660,000 զուռուշ)։
Սովհետեւ ասոնց հանած թուղթը դրամասեղա-
նին հանած թուղթէն գրեթէ ամենեւին տարե-
րութիւն չունէր, որոշելը խիստ դժուար էր. և
թէ որ դրամասեղանը այս թուղթերս բռնելու
չըլլար նէ՝ իր յարգը պիտի կոտորէր, ուստի շատ
մտածելէն ետքը դրամասեղանին գործակալները ի-
րենց յարգը պահեցնելէն աղէկ սեպեցին 150,000
ֆռանք վնաս կրելը. ուստի որոշեցին որ այս կեղծ
դրամաթուղթերն ալ անխափ հարազատ դրամա-
թուղթերուն պէս յարգի բռնել, և ձեռքերին
անցածը գինը տալով առնել ու պատուել։ Թէ որ

նոյն վարպետ խորհրդները 150,000 ֆռանքնու-
յէն ետքը նորէն թուղթ հանելու ըլլան նէ՝ անոր
ճարն ալ անկէց ետքը պիտի հոգացուի։

— «Յուլիս 7 ին Սալքեր անուանով 17 տարեկան
տարաւանի սատար (քալֆա) մը Սուլթան Քառլէն
մեղքներու գիտաւորութիւն ունենալուն համար
բռնուեցաւ. բայց դատաւորները անկալ խն-
թանոց խաւրեցին և կըսէ Սուլթան Քառլէն
պատուական լրագիրը։ Սոր քիչ մը ընդարձակ
պատմութիւնը յաջորդ թերթին կը թողուի։

ՃԵՋԱՅԻՐ։ Օսան քաղաքին մէջ մէկ գաւազն-
յութիւն մը յայտնուեցաւ, որ յուլիսի 13 էն 14
ընկերութեանը հանելու խօսք ըսեր են։ Այս
ընկերութեանը անդամներուն մէջ շատ փարիզի
գրականացան, որ Օսան քաղաքին շրջակայ արու-
արձանները կը բնակէին. քանի մի սպանիացի և
բուն ձեղապիտի արտադրէն ալ։ Վիտաւորութիւն
այն ըլլալ երեւեցաւ, որ զինուորական վերին և
ստորին հրամանատարները պէտի մեղքներն, ետ-
քը քաղաքը պիտի փողոպտեն. և ով որ իրենց
խորհածին հաւանութիւն չունենալը գիտէին նէ
անոնք ալ պիտի ջարդէին։ Շատ մարդիկ բռնուե-
ցան և բանտը գրուեցան. վրանին քննութիւն պի-
տի ըլլայ։ Վրտուի որ ասոնց խորհրդատու գլխա-
ւորները Փարիզ են. քննութիւն ըլլայ նէ կը հասկը-
վի այս խօսքին իրաւ կամ աւտ ըլլալը։

Ինչիսի գորապետը յուլիսի 10 ին զինուորնե-
րը կը թուլութեան հանելով, անոնց ատենախօսու-
թիւն մը ըրաւ. որկէց կը հասկըուի որ՝ զինուոր-
ներէն ալ քանի մի հազի այս գաւազնութեան մէջ
խառնուած են. աւելի խաբուելով, քան թէ չու-
րամուութեամբ։ Սոյն ատենախօսութեանը մէջ
զօրքէն խօսք կ'առնէ յիշեալ գորապետը, որ թէ որ
ապստամբներուն գլուխը ջաղխելու համար և Վը-
ռտնասն ասոնց երեսէն գալու վտանգէն աղաւտ-
լու համար արիւթար պատերազմին։ Վիէն միա-
բան խօսք կուտան։

ԱՆՎԱԽԱ։ Հիւսիստանի ինքնիշխան տերու-
թիւններէն Սեբալ ըսուած տերութեան թագա-
ւորը անցածները իր ազգին ազնուականներուն մէ-
կը գեսպանութեան պաշտօնիւ ինկիլթեռա խոր-
կէց։ Սոր թէ հագուստը, որ արեւելեան կեր-
պով շատ մեծագին լաթեր հագած, և գլխու փա-
կեղին (սարլին) վրայ մեծագին գահարներով զար-
դարուած ըլլալով ինկիլթեռան աչքին չի տեսնը-
ված նոր բան մը կ'երեւայ, թէ մասնաւոր սով-
ութիւնները և թէ բարքը ինկիլթեռա ազգին հետա-
քըքրութիւնը շարժեցին, անանկ որ՝ Օստաւա-
կած օրէն ի վեր Օստաւայի օրագիրները ամէն
թերթինուն մէջ ասոր վրայօք մէկ մէկ բան կը
հրատարակեն։ Սոկայ հազիփոխութիւն հաւա-
տացող կապաշտներէն է. որ կարծելով թէ մէկ
մարդ մը մեռնի նէ՝ անոր հազին տնտեսունի մը
մարմին կ'անցնի, անտեսունի միայ չէն ուտեր, մի-
այն խառնըն և կ'աղանգէն կ'ուտեն։ Ինկիլթեռ-
տերութեան մեծամեծները ասոր հազիկերպովներ
ըրին. ինքն ալ կ'երթար. բայց սեղան չէր նստեր
հետերին. անոնց հազ կերած սենեակին ալ չէր
կենտր. այլ անոնք սեղան նստածին պէս ինքն ալ
ուրիշ առանձին սենեակ մը կ'երթար, իրեն կրօն-
քին հրաման րոտը կրտսիւրներէն կ'ուտէր. սե-
ղանը վերնալէն ետքը կ'ըլլէր ինկիլթեռ մեծամեծաց
քովը կուգար։ Այս գեսպանը օր մը երբ որ Օ-
ստայի փողոցները ֆայթօն կը պարտէր, մէկ աղ-
քատ մարդ մը կը տեսնէ որ փողոցները կ'աւելէր
և մասնաւորաց տուններէն աղբերը կը վերցունէր.
և այս գործոց համար առած վարձքովը իրեն աղ-
րուտը կը ճարէր։ Վիտաւոր ասիկայ կը ծանցնայ-
որովհետեւ բնիկ Սեբալի, և անկէց Օստաւա-
կած է եղեր. քովը կը կանչէ և կը հարցունէ թէ
ինկիլթեռ լեղու գիտե՞ս։ Սորոց պատասխան կու-
տայ. ես տան և ութը տարի է հոս ըլլալով շատ
աղէկ տրվեցայ. անանկ է նէ՝ կ'ըսէ դեսպանը. ին-
ձի ալ թարգման մը պէտք է. հետո եկուր. կ'առ-
նէ իր ֆայթօնը կը նստեցնէ. իր բնակարանը կը
տանի, և ձեռք մը փառաւոր լաթ տալէն ետքը ի-
րեն դեսպանատանը թարգման կ'ընէ։ Սոկայ գես-
պանը որքան առ հարկի ըրաւ նէ՝ ինկիլթեռները հա-
րենապիտութեան և աղգապիտութեան գործ մը բըւ-
նելով շատ հաւանեցան։ Օստայի մէջ ինկիլթեռ-
րէն հնդկաց լեղու գիտցող էփ աղէկ մարդ կը գը-
նուին. բայց դեսպանին իրեն հայրենակից և հա-
մազի մարդու մը չափ հաւատարմութիւն չէն
կրնար ընել. ուստի դեսպանին ըրածին մէջ աղգա-
սիրութիւն կայ ալ նէ՝ աւելի փոհեմութիւն և իր

բանը գիտնալ կ'երեւի :

— Ինկիլթէնուա շատ մարդիկ իրարու հաւա-
տարմութիւն ունենալով ընկերութեամբ առու-
տուրի մէջ կը մանեն . և այս ճամբով հարստացած
շատ մարդիկ կան . բայց միմեկին իր գլխուն ա.
ռանց ընկերի վաճառականութեամբ հարստացած
մարդ խիստ քիչ կը գտնուի : Երաններուն մէկն
էր Պիշի անուն մէկը , որ մօտ ատեններս մեռաւ :
ասիկայ մանր առուտուրներէն սկսելով կամայ
կամայ մեծ առուտուրներու ալ ձեռք դար-
կաւ . և բազմեալ ալ բանեւով , և մէկ վնաս մին ալ
չի կրելով , անբաւ հարստութիւն գիգած էր , մին-
չեւ այնքան որ Ինկիլթէնուայի երկաթ ճամբանէ
բուն մէկ քանի հատը ինք մինակ իր վրայ առնե-
լով շինել տուաւ . և իր գործոյն մէջ գտնուող
երկրաչափներուն և ճարտարապետներուն մէկ քա-
նի հատին ամիսը մինչեւ տասն և հինգ հազար
դոլարու շահական տուած մարդ ունենալով ա-
ռանց ամենն ալ քանի մը տարիէ ՚ի վեր կ'ապրեցը-
նէր : Երաններէն ետքը լծեպէտ ասոր մարդոց ա.
մէկըն ալ մէկ մէկ բան գտնելով իրենց ապրուստ
կը ճարեն , անօթի չեն մնար , բայց առ այժմ քա-
նի մը հազար հոգի՝ որ այս մարդս կը բանեցընէր
և կ'ապրեցընէր , բայն են :

— Վ ինչնայի Եւրոպայի պատուական լրագիրը կը
գրէ :

« Լմայս (յուլիս) 3ին Փարիզու վրայէն եկած
ստոյգ լուրէ մը կ'իմանալք թէ Սիր Ռուպերտ Ի-
նկիլթէնուայի խորհրդանոցին երեւելի ատենախօսը ,
որն որ քանի մը օր յաւաք պատգամաւորաց խոր-
հրդատուն մէջ Եւրոպայի քաղաքներէն ընթացքին
վրայ երեւելի ճառ մը խօսած էր , գոյազգու-
թեամբ ձիւն ինկալով վախճաններ է » :

— Տեղիս անուն հարուստ մարդ մը ձի վաղը-
նէրու շատ սեր ունենալով յատուկ արագութեայ
ձի կը պահէր . և իր ձիերուն շատ վաղելուն այն-
քան վառահ էր որ 90.000 քէսէ ստակի չափ գը-
րամ խոտացաւ , թէ որ մէկուն ձին իր ձիերէն
աւելի քալէ նէ : Բանի մը հոգի ընկեր ըլլալով
90.000 քէսէ ստակ ալ անոնք իրենց կողմէն դրին
ու Տեղիսին ձիերուն հետ իրենց պահած ձիերը
արշաւելու հանեցին : Լմայս մէկ քանին Տեղիսին
ձին անցաւ . ուստի Տեղիս պարտաւորեցաւ խոտ
տացած ստակը տալու , որ միւս ձիերուն տէրերը
իրենց մէջ բաժնելով էփ աղէկ օգուտ տեսան Տե-
ղիսին շտալութենէն :

— Երբեմն ուրիշ ազգաց մէջ հասարակաց ա-
ղէկութեան համար խորհուած և ՚ի գործ դրուած
բան մը գտնելը նէ՝ անխորհրդ կը հրատարակեմք .
փափաքելով որ անանկ բարերարութեան դարձ-
փարներ մեր մէջն ալ մանեն . որովհետեւ մեզի ա-
նանկ կ'երեւի որ մեր ազգի բարերարութիւն սի-
րող և ասոր համար սէսք եղած ծախքերէն չի
փախդող ազգ մըն է . բարերարութիւն ընելու ա-
ռարկայները գտնէ նէ իր կողմէն հաղորդ և մաս-
նակից կ'ըլլայ . և ասիկայ յատուկ խօսքով ստուգե-
լու կարօտ չըլլալու չափ ապացոյցներ կան : Եւ-
դային դպրատուները գրեթէ ամենն ալ թէ կրա-
տանդնուպօիս , թէ չըմալայներ , և թէ Լիւիսի
և Լըրուպայի հայոց բազմութիւն բնակած քաղաք-
ները և գիւղերը անգամ՝ աղայք ձրի կը կարգան .
տեղ տեղ կարգաւ գիրքերնին և գրի վարժուե-
լու թուղթերնին և գրիչնին և թանաքը (մուրէ-
քէպ) անգամ ձրի կը արուի . ասոնց ծախքերը որ-
կէց կ'ըլլան . ընկերութիւններէն կամ եկեղեցիներ-
էն կամ դպրատուներէն իրենց մասնաւոր եկա-
մուտէն . և ասոնք ամենն ալ ազգէն բաժնէ : Եւ
գին աղէկ բանեւէ չի փախչելուն բաւական ապա-
ցոյց մըն է ասիկայ :

Շատ մարդիկ կան որ աշխատասէր են . որքան
ժամանակ կրնան բանիլ նէ՝ իրենց ծակատին քրտին-
քովը իրենք զիրենք , և թէ որ ընտանիք ունին նէ
ընտանիքներն ալ ուրիշին կարօտ չըլլալով կրնան պա-
հել . կարելի է որ արտաքցը կարգի պատահելու
ծախքերուն օգուտ ընելու համար քիչ մը բան ալ
մէկ զի գնեն , բայց երբ որ հիւանդանան կամ
ձերանան նէ՝ խեղճութեան մէջ կ'ընան . ապրե-
լու նեղութիւն կը չընեն , մահուան կը փափաքին .
և իրենք զիրենք մեղքներուցնելու ալ կան : Եւ շատ
մը գիտի և բարերարութեան արժանի մարդիկ :
Լմայս ինչ ընելու է : Ինկիլթ ազգէն քանի մը բա-
րեսէր և խելացի մարդիկ մտածեր և ասոնց ինչ
ընելը գտնէն : Սէկ դրամը աւանդարան մը
հաստատելու և յայտարարութիւն մը հանել են :
Հայտարարութիւնը կը ծանուցանէ որ՝ ով որ այն
աւանդարանի որդեկներն օրը անխափան մէկ մէկ
քաննոց տայ նէ՝ երեսուն տարի ասանկ շարունա-
կելէն ետքը , թէ որ վերը ըսածին պէս վաստակի

անկարութեան կամ հիւանդութեան մէջ ինչայ և
ապրելու նեղութիւն քաշէ նէ , աւանդարանին
ընկերութիւնը անոր ապրուստին օգտելու չափ
ամանական պիտի կապէ որ նեղութիւն չի քաշէ : Թե-
որ դրամ տուողներէն մէկը երեսուն տարին չի ը-
մընցած մեռնի , և ժառանգները չքաւոր ըլլան և
նեղութեան մէջ գտնուին նէ , դրամաւորանը ի-
րեն արուած ստակը բանած չափ մէկ տեղ այն
կարծաւալ ժառանգներուն պիտի տայ : Եւ ըլլայ որ
աւանդարանի տուող մարդ մը մինչեւ ՚ի մահ օրը
մէկ մէկ քաննոց տալու կարող կ'ըլլայ . և մեռ-
նելէն ետքը ժառանգներն ալ այն ստակը ետ առ-
նելու կարօտ չըլլալով իրենց փառասիրով կ'ապրին .
այն ատենը ստակը սնտուկին կը մնայ . և սնտուկին
գործակալներն ալ ուրիշ կարօտաւորներու օգնու-
թիւն ընելու կը խարժեն : Եւ յայտարարութիւ-
նը երեւելէն ետքը շատ չանցաւ . ընկերութեան
արձանագրութեան մէջ հաղորդուող հոգի գրուե-
ցան , սրոյ շատը հարուստ մարդիկ ալ են . օրը
քանական փարան կուտան , որ կարօտեալներուն
օգնութիւն ըլլայ : Եւ դրամաւորանը իրանտա-
յի ինկիլթէնուայի (քէս տէրաբունը) ըսուածին
քիչ մը կը նմանի , բայց երեւելի տարբերութիւն-
ներ ալ ունի : Եւ անոնց ինչայութեան մտաւոր
գրուող մարդը՝ օրուան ծախքէն ինչ ստակ եկե-
լու քովը նէ կը տանի հոն կուտայ . ուղած ատենն
ալ ուղածին չափ ստակ անկէց կրնայ առնել , թէ
որ ուղածը իր տալովը հոն գիղուած ստակէն ե-
կել չէ նէ : Եւ անայութեան սնտուկը որո-
շեալ ժամանակ մը անցնելէն ետքը ամանական տալ
կանանած չէ :

ԱՆՍՏՐԻԱ : Եւրոպայի պատուական լրագիրը կը
գրէ . « պաշտօնէից ժողովրդին առաջարկութեամբ
բը՝ կայսրը Սառաւիտանի բանակին վերին հրա-
մանատար ու զինուորական կառավար թեգան-
գապետ Հայնալ Սեպուհը իր բարձր պաշտօնէն
վար ձգեց : Եւսանկ բարձր զօրավարի մը աս կեր-
պով չարաչար ու յանկարծ ինկալը մայրաքաղաքին
բնակչացը վրայ շատ մեծ ազդեցութիւն չըբաւ .
ինչու որ ինչպէս յայտնի է մաճառները յաղթողը
Հայնալ Սեպուհն էր : Եւս ծանր դէպքին պատ-
ճառը կուտայ աստիճանային իշխան լրագիրը .
որն որ թէ Վ ինչնայի պաշտօնական լրագիրը և
թէ լայ յառաջ կը բերեն . . . ոչ կառավարու-
մը և ոչ տէրութիւն մը կրնայ կենալ կամ գոր-
ծել , երբ որ իրեն գործիք ըլլող պաշտօնէիցը կամ
հպատակները հնազանդութեան վրայ ապահովու-
թիւն չունին . և ամենեւին պաշտօն կամ արգիւնը
մը՝ որչափ բարձրագոյն ալ ըլլայ , չի կրնար զգա-
տօնաւորն ազատ ընել իր պարտքերէն , կառավա-
րութեան ծայրին հնազանդ ըլլալէն . և կամ թոյլ
տալ՝ որ գրուած սահմանէն դուրս ելլէ : Եւ ոչ ա-
տենք մտածելով չի կրնար տարախուտանայ տակ ի-
նչու որ կառավարութեան բանեցուցած խիստ մի-
ջոյր կայսերական թագին պատիւն ու յարգը պա-
հելու և հայրենեաց իշխանութիւնը կանգուն
բռնելու համար եղած պիտոյ ըլլայ , ողջի ստանձ-
նական մարդիկ խեղճ մողովութեան կամ կառավա-
րութեան վրայ բռնանալու չի յանդգնին :

Եւս որոշումն ընելէն ետքը՝ օր վերը , կար-
ծես թէ պատճառն ալ աւելի ևս յայտնուելու հա-
մար՝ կայսրը պաշտօնէից իտալիական առաջարկու-
թեամբ՝ Հունգարիայի ապստամբութեան մաս-
նակից եղողներէն 109 հոգւոյ , որոնք հինգ տարիէն
մինչև 15 տարի բերդաբերութեան , և ոմանք նա-
և մահուան դատաւարութեամբ էին , չնորձք ը-
րու և բոլորովին ազատութիւններն չնորձեց » :

Եւս որոշումն պատճառէն տուելով պատշաճ կը
դատեմք Հայնալ Սեպուհին ինկալուն այս պատ-
ճառը առաջ : Եւս որ այս զօրավարին պատուիրած
կ'ըլլայ մաճառներուն հետ գլխով վարուիլ . Հայ-
նալ մտիկ ըրած չըլլար և խստութիւն կը բանե-
ցընէ . որպէս զի ապստամբութեան դէմ միշտ տարա-
ծէ և գրգռէ մաճառներուն արտին մէջ , և անոնք
զսպելու համար ինք հարկաւոր սեպուհելով պաշ-
տօնին վրայ շարունակ մնայ : Իր իշխանութիւնը ա-
պահովընելու համար բռնած ճամբան իրեն ինչա-
լուն պատճառ եղած կ'ըլլայ :

— Սառաւիտանի Վոյնուս բերդաքաղաքէն
մէկ ինկիլթ զինուորական ճարտարագետ մը
բռնեցին , որ մաճառներուն սոք ելած և Եւսգրի-
այի դէմ պատերազմած ատենը շատ օգուտ բեր-
է անոնց իր վարպետութեամբը : Կառավարութիւ-
նը հրաման ըրաւ որ հետը մարդ գրուի , և հիւ-
սիսանկողման Վերմանիայի երկաթ ճամբովը Եւսգ-
րիայի սահմանէն դուրս հանեն . այն տեղ թողուն

որ ուր կ'ուզէ նէ երթայ :

ԲՐՈՒՍԻԱ : Եւս թագաւորութեան Ուէն գե-
տին քովի գաւառին կցորդ Վէգել քաղաքը ամէն
տարի մեծ տօնավաճառ կ'ըլլայ : Ուէն գետին եզ-
րը ըլլալով՝ քովը մէկ հատիկ կամուրջ մը ունի նա-
ւակներու վրայ շինուած , որուն միւս ծայրը գե-
տին այն գիւի կողմը Պլուխէր ամրոցը կայ , որ այս
կամուրջով քաղաքին հետ կը միանայ : Եւս ճամ-
բորդներուն շատը գետին վրայէն նաւակով անց-
նելով քաղաքը կուգան : Եւս տարուած տօնակա-
ճառին օրը յատկանշալով՝ այս գիւնն այն գիւնն ըս-
կրան վաճառականներն գալ . երկու հարիւր հոգի
ալ նաւով գետին վրայէն գալն իքէն . նաւը ջուր
առնելով կ'ընկղմի , և հարիւր հոգին ալ կը խեղդ-
ուին , մնացածը կ'աղաւտին . խեղդողները ըստ
մեծի մասին կնիկ մարդիկ և տղայք են եղեր :
Վաղաքական կառավարութիւնը տեսնալով որ տօ-
նավաճառին սկիզբը ըլլալէն առաջ ասանկ ազդեա-
լի գիղուած մը պատահեցաւ , ասիկայ գէշի նշան
բռնեց . ուստի չըջարեալիս թուղթ հանեց որ
այս տարի Վէգելի տօնավաճառը պիտի չի բացուի :

ՀՈՌՄ : Հռոմիոյ խռովութիւնը պատահելով
Հռոմիոյ քահանայապետը անկէց ելելէն ետքը
նոյն քաղաքը պաշարուած ատենը՝ Հռոմիոյ իշ-
խանութեան տակը եղած երկիրները գտնուող ին-
կիլթ վաճառականները 12.000 լիրա սգէ-լինի չափ
վնաս կրած ըլլալուն համար այս անգամ ինկիլ-
թի տէրութիւնը ուզեց որ Հռոմիոյ կառավա-
րութիւնը յիշեալ վնասը վճարելը իր վրան առնէ :
Հռոմիոյ կառավարութեան նախարարները թէ-
պէտ պատասխանեցին թէ այս վնասը Հռոմիոյ
կառավարութեանը կողմէն եղած չէ , քանի մը իւր-
աւարար մարդոց պատճառաւ եղած է . և կը
յուսան որ այս ինկիլթի այս պատճառին համար
ետ կը մնայ . բայց ինկիլթի տէրութիւնը իմացուց
որ այս ինկիլթի անցնելէ չունի : Ուստի ասոնք
ալ որոշեցին որ՝ Հռոմիոյ կառավարութեան հը-
պատակներուն վրան մէկ նոր տուրք մը ձգեն , ա-
մենուն յոյանելով թէ ինկիլթ վաճառականներուն
քաշած վնասուն փոխարէնն է . և այս կերպով յի-
շեալ ստակը վճարեն . և թէ որ ասկէց ետքը ա-
սանկ մէկ բան մը պատահի և նորէն խռովութիւն
և ապստամբութիւն մը ըլլայ նէ՝ երբ որ կառա-
վարութեան նախարարները և պաշտօնէիները քա-
ղաքէն ելլեն մէկ տեղ մը քաշուին նէ , վաճառա-
կաններն ալ հոն կենալով վնաս քաշելուն տեղը ա-
նոնք ալ շուտ մը Հռոմիոյ երկիրներէն դուրս ել-
լին . և թէ որ հոն կենան , և հոն կենալով ինչ
նաւ կրեն նէ՝ Հռոմիոյ կառավարութիւնը այն
վնասուն փոխարէն բնաւ մէկ հաստուցում մը չը-
նէ :

ՍՊԱՆԻԱ : Վ ինչնայի Եւրոպայի պատուական լրա-
գրէն հետեւեալ լուրը կ'առնենք , որ ուրիշ լրա-
գիրներ ալ կուտան : « Սանդեմիլի կոմսը՝ Տոն
Վալուսին որդին՝ Շարլոզ (Վալուզոզ) իշխա-
նուհայն՝ Վէսպոլայ թագաւորին քրոջ հետ նը-
շտուեցաւ : Վիսպոլայի տէրութիւնը աս ամուս-
նութեան գէմ ընդգրկութիւնները կը հանէ : Կա-
ռավարութիւնն իր Վէսպոլայի կեցող դեսպանին
հրաման իրկեց որ բաղբէր . և եթէ թագաւորը
հաստուցում ընել չուզէր՝ ետ դառնայ : Վիսպոլա-
կան շագնաւ մ'ալ Վէսպոլայ իրկուեցաւ , որ
գետապետին պատրաստ կենայ » :

Կատանդուպոլայ գաղղիական ծառայող լրա-
գիրը կը պատմէ թէ՝ Վիսպոլայի Վալուզոզի կեցող
դեսպանը յիշեալ նշանաւորին խօսքը լրմնալը իմա-
նալուն պէս անձամբ թագաւորին կ'երթայ և կ'ը-
սէ թէ՝ այս բանն լսելը ինձի մեծ զարմանք բե-
րաւ . և անշուշտ իմ տէրութիւնն ալ պիտի զար-
մանայ : Թագաւորը պատասխան կուտայ , շատ կը
ցաւիմ որ Վիսպոլայի տէրութիւնը այս բանին օ-
տար նպատակ մը կուտայ , որ լոկ առնին մէկ
գործ մըն է . անոր ալ կը ցաւիմ որ՝ խօսք տուե-
ւի . տուած խօսքս ետ չեմ կրնար առնել : Բայց
յիշեալ լրագիրը ասանկ ինչն ըսելով կը պատմէ . ը-
սածին երաշխաւոր չըլլար : Եւ յաջորդ թերթին
մէջ կ'ըսէ . կ'ըսեն որ ասիկայ անանկ բան մը չէ
որ ասոր համար Վիսպոլայի և Վալուզոզի կառավա-
րութիւնը իրարու հետ աւրուին :

— Վիսպոլայի տաճկական ձեռքի հաւաքի
լրագրէն մէջ կը կարգաւորէ : « Վիսպոլայի թագաւ-
որին մէկ զաւակ մը ծնեց է . և նոյնհետոյն հե-
ւաքութեան միջոցով պէտք եղած տեղերը ըւրը

տարածուեր է . բայց մանչ կամ աղջիկ ըլլալը տա-
կաւին չէ իմացուած ։

ՅՈՒՆԱՍՏԱՆ : Իբրեւ ստոյգ կը պատմուի որ
յուշնաց կառավարութիւնը խորհրդարանին պիտի
առաջարկէ որ մէկ օրէնք մը դրուի օրագիրներուն
անսահման ազատութիւնը զսպելու համար : Այս
ազատութեան գէշութիւնները Յունաստանի օ-
րագիրներէն ալ ելել և իմացուիլ սկսաւ : Աթէնք
քաղաք (հայրենիք) անունով մէկ նոր լրագիր մը
տպուիլ սկսաւ եր . և մէջը թագաւորին պատ-
ուոյն գտնուեալ խօսքեր կար . ուստի այս լրագիրը
խախտեցին : Այս լրագիրը այնչափ համարձակա-
խօս եղաւ որ՝ Աթէնքի մէկ ուրիշ լրագիր մը՝ որ
յայտնադէս կառավարութեան հակառակ կը խօ-
սէր , քաղաքի լրագրին բռնած ընթացքին չի հա-
նեցաւ և դատախազութիւն ալ ըրաւ :

ՍԱՌՏԵՆԻԱ : Օսկէ-Լարօն ուսման լրագիրը կը
80 թուոյն մէջ իբրեւ անուն խաղաղական օրագրէն
առնելով կը ծանուցանէ թէ՝ Սառտենիայի տէրու-
թեան կողմէն Սաղըրպի Վանձեր քաղաքը նստող
հիւսիսային Պ . Վառքանէզին՝ տէրութեան նա-
խարարաց ժողովոյն նախագահ Պ . Լազիօնի պաշ-
տօնական գիր է առեր . որ Սառտենիայի տէրու-
թեան կառավարչին ամիսը 300 ըրա եկամուտ
կապուեր է տէրութեան գանձէն . և կառավար-
չին կը հարցուի թէ այն ստակը ուր խրկուի :
Կառավարչի թուեցումը կողմերը կը կենար մինչեւ
այս մօտերս . ասոր համար այս բանս Վանձերի
հիւսիսային կը գրուի : Բայց կառավարչի վերջին
օրերը Նիսիսիցաւ ինչնալով անկէց Նիկիթէոս ա-
նցեր է . Վանքիկա երթալու մտքով . և Պ . Վառ-
քանէզի գրով ծանուցեր է կառավարչին այս լու-
րը : Իբրեւ օրագիրը այս լուրս կառավարչին զե-
րերէն առեր է . և կարելի է որ՝ կառավարչի իր
կուսակիցներուն առաջը տարաշխարհիկ պրօպա-
նով յարգը չի կորսնցնելու համար ասանկ սուտ
մը չենած ըլլայ . բայց թէ որ Սառտենիայի Սառտե-
նիայի հետ հաղորդակցութիւնը իրաւ է նէ՝ կա-
րելի է որ այս ալ իրաւ ըլլայ :

ԱՅՊԱՅԻՆ

Ընդոյ 9 ին կիրակի օրը՝ Կոստանդնուպօլսոյ նե-
ղուցին Նոր գիւղը գերապատիւ Սիսաք ամիրային
աղնուական օրգւոյն Պետրոս աղային հարսանեաց
հանդէսը կատարեցաւ : Գերապատիւ ամիրայն օ-
տար տէրութեանց կողմէն Կոստանդնուպօլսոյ գլու-
նուող գերապաններուն հրաւեր խրկած ըլլալով՝ ա-
նոնք ալ անձամբ գալով կամ իրենց կողմէն մարդ
խրկելով հարկը պատուեցին : Եւ ասոնք են :

Ինկիլիզի գեսպան Սիր Սքէքֆըրտ Քէնինկ ,
Ռուսոյ գեսպան Պ . Թիթով ,
Ապանիայի գեսպան Պ . Սուզա .
Իսրայիլի գեսպան Պ . Բուվալէսի կոմսը .
Ամերիկայի միացեալ Նահանգաց հասարակապե-
տութեան գեսպան Պ . Սարչ .
Աւստրիայի գործակալ Պ . Քլայն .
Ֆրանսիայի գործակալ Պ . Սօլերուս .
Եթովպիայի գործակալ Պ . Վարձեօնի .
Հելլենաց տէրութեան գործակալ Պ . Տէլիսանի .
և Թուրքիայի գործակալ Պ . Թէսթա :

Ասոնք ամէնքն ալ իրենց ընտանեօրը եկան իւրա-
քանչիւրը իրենց գերապանատան պաշտօնատէրէն-
քէն ալ հետեւին ընկեր առնելով : Ֆռանսիայի և
Սառտենիայի գերապանները չի կրնալ գալելուն
համար իրենց խորհրդական գրագիրները խրկեցին
փոխանորդաբար : Եւրոպայի քանի մը աղնուական
գիտնական անձինք ալ՝ որ ճանապարհորդութիւն
ընելու և այլեւայլ տեղեաց բնակիչներուն բարբը
և սովորութիւնը գիտելու համար իրենց երկրէն
եղած ըլլալով այն օրերը Կոստանդնուպօլսոյ գան-
վեցան , անոնք ալ հրաւիրուած ըլլալով հարսանիք
եկան : Ընդոյ մէ՝ և մեր աղբի երեւելի և մեծա-
պատիւ կոչնականներէն զատ՝ թէ եւրոպացի և
թէ յոյն երեւելի փառաւորներ , և հռոմէական
հայոց երեւելիներն ալ հրաւիրուեցան :

Եւրոպացի մեծաբոյն անձանց աւելի հետա-
քըքրութեան առարկայ մը եղաւ հայաստանեաց
սղարք . Եկեղեցւոյ արարողութեամբ սուրբ Պատ-
կի խորհուրդը տեսնելը . որովհետեւ ասիկայ տես-
նելու պատահութիւն խիստ քիչ կրնային ունենալ .
ուստի Պատկի ատեն յիշեալ մեծաբոյն օտարազգի-

ները մօտ գալով յատուկ ուշադրութեամբ գի-
տեցին արարողութիւնը : Կոստանդնուպօլսոյ և սք-
Երուսաղէմի ամենապատիւ Պատրիարքը Տ .
Յակոբ և Տ . Յովհաննէս սրբազան արքեպիսկոպոս-
ները , Կոստանդնուպօլսոյ նախկին Պատրիարք Տ .
Սառթէոս Սրբազան Երբեպիսկոպոսը , Խաաքիւղի
քարոյն Տ . Յօհաննէս ծայրագոյն վարդապետն ,
և նեղուցին հայաբնակ գիւղերուն քարոյն Տ .
Յակոբ շնորհափայլ վարդապետը . սրբազան Պատ-
րիարքի ձեռնադրու աշակերտ շնորհափայլ Տ . Վեորդ
վարդապետը , և նախկին Պատրիարք Սառթէոս
սրբազանի ձեռնադրու աշակերտ Տ . Վրթանէս վար-
դապետը . եկեղեցական փառք զգեստներով զգես-
տաւորված . և 10 քննայ և տասն գպիր և երեսու-
նի չափ երաժշտական արուեստի հմուտ և հետե-
ւող քաղցրածայն մանկուքն ամէն մէկը իրենց աս-
տիճանին համեմատ եկեղեցական զգեստներով ըլ-
գեստաւորուած հոն կայնիլ և պատկին օրհնու-
թեանը կատարիլը՝ եւրոպացի աչաց չի տեսած և
տեսութեան արժանաւոր դատելու մէկ բան էր :
Եւ հանգէսը բոլոր՝ այլ և այլ աղջաց սիրով միա-
ւորութեան մէկ գեղեցիկ և նախանձելի պատկե-
րը եղաւ : Կոստանդնուպօլսոյ Տ . Յակոբ Ամենա-
պատիւ Սրբազան Պատրիարքը պատկէն ետքը հան-
գիսականաց և յատկապէս օտարազգիներուն դառ-
նալով՝ համարօտ և պարագայներուն յարմար խօս-
քով մը թէ իր կողմէն , թէ բոլոր աղբի և թէ
հանդիսագիր գերապատիւ Ամիրային կողմէն շնոր-
հակալութիւն ըրաւ :

Թէպէտ պատկէն ետքը ՚ի շնորհս եւրոպացի
մեծաբոյն կոչնականաց՝ եւրոպացւոյ սովորութեա-
նը համեմատ փառաւոր կաքաւ (պալօ) մըն ալ ե-
ղաւ , և անկէց ետքն ալ նոյնպէս փառաւոր հաց-
կերպի մը , և ասոնք ալ առ հասարակ ամէնուն
շատ ընդունելի եղաւ . բայց ամենէն աւելի ըն-
դունելին պատկի խորհրդոյն մատակարարութիւնը
տեսնելին էր : Այս հարսանեաց պատճառաւ
ո գիտէ որքան և ինչպէս թիւր կարծիքներ բժշ-
կուեցան . որ գուցէ միայլ տեղեկութիւնքն առնե-
լով եւրոպացւոյ մէջ տարածուած էր . և մեր կող-
մէն ասանկ բանէ մը զատ ճամբայ չէր գըրտուէր
անոնք շիտիկը : Սիսայն այս խորհրդածութիւնս
բաւական է գերապատիւ ամիրայէն շնորհակալ
ըլլալու : Թող զի ճանապարհորդներն ալ երբ որ
իրենց ճանապարհորդութիւնը գրելու և հրատա-
րակելու ըլլան՝ ՚ի հարկէ գովութեամբ պիտի խօ-
սին այս հանգիսիս պատճառաւ՝ ընդհանրապէս
մեր աղբին համար . և ասանկ բաներով կամայ կա-
մայ աղբերնուս վրայք եւրոպացւոյ գրասէր և
հետաքրքիր ազգաց մէջ աղէկ համբաւին կը տա-
րածի : Գերապատիւ ամիրային ըրած աղնուական
մարդասիրութեամբ արգիւնքը , և մեր անկէց ջե-
նորհակալ ըլլալուս պատճառը ասոնք են :

— Ընդոյ 11 ին երեքշաբթի օրը՝ որ Սրբոյն
Վանիէլի մարգարէին և երկը մանկանց Սքէրա-
քայ Սիսաքայ և Երեմիայի տօնն էր , որոց ա-
նուամբը տեառնաբար և Կոստանդնուպօլսոյ նե-
ղուցի Նիկիթէոսի գիւղին եկեղեցին , որով և նոյն ե-
կեղեցւոյն ալ յատուկ տօնն էր , եկեղեցական մեծ
և փառաւոր հանդէս եղաւ նոյն եկեղեցին . և ա-
մենապատիւ Տ . Յակոբ Սրբազան Պատրիարքը հոն
գանուելով սուրբ Պատարագ մատուց : Եկեղեցի-
ւորստին Նոր գիւղ դառնալով յունաց Եղօֆէթ
արժանապատիւ Երիտարքի պէյին տեսութեան
գնաց , սուրբ Երուսաղէմի նորընտիր սրբազան
Պատրիարքին հետ . որովհետեւ Եղօֆէթն ալ
գերապատիւ Ամիրային հարսանիքը գանուելով
յաջորդ երկուշաբթի օրը սրբազան Պատրիարքաց
յարգական այցելութեան գացած էր :

— Սք Երուսաղէմի աթոռոյն նորընտիր Պատ-
րիարք Տ . Յօհաննէս Սրբազան Երբեպիսկոպոսը
ամսոյ 8 ին Սուրբ Երուսաղէմի գիւղի նշխա-
րաց տօնախմբութեան շաբթի թաւաւորուեալ եկե-
ղեցական փառաւոր հանգիսի և գոհաբանական
հոգեւոր երգով մայր եկեղեցւոյ սուրբ Խաչի կող-
մը ինչեցուցին . և հոն գաւմարեալ բաղմամբ
ժողովրդոյ պատրիարքական անդրանիկ օրհնու-
թիւնը տուաւ :

— Գերապատիւ Նիկիթէոսի Սիրոյն Ամի-
րայն . որ անցեալները քիչ մը տկարութիւն ունե-
նալուն համար Պրուսայու համբաւաւոր առող-
ջարար տաք ջուրերը գնացեր էր , իր ճանապար-
հորդութեանը պտուղը տեսնելով առողջ և հան-
գիստ վեճակի մէջ ամսոյ 9 կիրակի օրն մայրաքա-
ղաք դարձաւ :

— Իրեն տպած գրքերովը բոլոր աշխարհի ծա-
նօթացած Երապեան տպագրապետ յարգի Վա-
լուստ աղայն՝ շատ ժամանակէ ՚ի վեր հիւանդոտ

ըլլալով , ամսոյ 9 ին մեռաւ . իր բաղմամբ բա-
րեկամները սգոյ մէջ թողլով :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Երբեք անհաշիւ Ֆռանսայի ժիւճոտ բաժնին աղ-
քատ գիւղացիներէն մէկը մէջը չորս հոգի առնե-
լու տեսակ մը պղտիկ կառք (ֆինդօլ) հնարեց .
որ մէկ հանձարաւոր չէնքով մը՝ միայն չունենե-
րու օգնութեամբ կը քայլէ . արագութիւնն ալ՝
վաղելով քարոյ մէկ ձիւ մը քաշած կառքի արա-
գութեան չափ է : Եւ նոյն վարպետը կը խոստա-
նայ այս գիւղում կատարելագործելու անանկ որ՝
բանեցրնելու համար ձեռք հոգնեցրնելու ալ կա-
րօտութիւն չի մնայ . և այս բանիս համար վեց
շարժիչ (եայ) և տանեւերկու ճախարակ (մա-
քառա) պիտի եկեղնէ իր առաջիկ շինածին վը-
րայ : Խեղքին չափ լեցուն քսակ չունենալուն հա-
մար է եղեր որ այս օգտակար գիւղիս կատարե-
լագործութիւն մինչեւ հիմա ետ մնացեր է . ձեռք
բռնող գանէ նէ՝ կը վատարկի . և կառք պահող-
ները կառքի համար ձի պահելու հոգէն ալ կ'ա-
զատին . ձիէն աւելի կը շատնայ կառքը . որովհե-
տեւ ձիւ համար ամէն օր ծախք պէտք է . օր մըն
ալ կը մեռնի , և տիրոջ տուած ստակը և օրէ օր
ըրած ծախքը ամէնը մէկէն պարագ կ'երթայ . ա-
սանկ կառք մը մէկ անգամ մը շինուի նէ՝ ոչ բան
կ'ուտէ . ոչ կը հիւանդանայ : Երբեմն պիտի աւրը-
վի . ՚ի հարկէ անոր ալ ճարը ճախարակները կամ
չունենելու փոխելով պիտի գանուի . որ շատ ծախ-
քի կարօտ չերեւի :

— Բնակիչ : Երբեք տարի մեքենայ գործածող-
ները ամէնքն ալ գիտեն որ ձմեռը այս գործիքն չի
բանիր . որովհետեւ բոլոր գործիքը միօրինակ իւր
նաւութիւն մը կ'առնէ օգէն . և երբեք տարիս
հեղուկը կը ցընդի : Պ . Սուրբ բնագէտը ասոր
ճարը գտած է . որով ամէն ատեն երբեք տարիս
գործիքը կրնայ բանիլ . և պարզ բան մըն ալ է :
Իսկող գործիքին վրայ ճարպ (իչ եաղը) քրտելու
է . որով խոնավութիւնը գործիքին չի գըպչի :

ԼՈՒՐԵՐ

Եկեղեց երեք տարի առաջ ցորենի և ուրիշ ար-
մրտեաց քիչութեան Եւրոպայի շատ երկրներն ա-
նանկ մեծ նեղութիւն քաշէր էին , որ մինչեւ հի-
մա խելուքնին գըրտնիս եկած չէր : Այս տարի
Ֆռանսա և Ինկիլթէրա և ուրիշ երկրներ թէ-
պէտ ծաւերը ցորենն աւրուելով ծաւերուն պը-
տուները քիչ եղան , բայց ցորեն և մարգարեն և
գարի և ուրիշ ասոնց պէս արմուքը շատ առատ
ըլլալով կը յուսացուի որ՝ երեք տարի առաջ քա-
շած ցաւերնին այս տարի կը մոռնան : Եւրոպա ար-
մրտեք քիչ և սուղ ըլլայ նէ՝ մենք ալ այս կողմե-
րու չեմք կրնար աժան հաց գտնել . որովհետեւ
այս կողմերը բուսածն ալ , և ուրիշ տեղէն հոս
գալու արմուքն ալ Եւրոպա կ'երթան . ինչպէս որ
այն սղութեան տարին օրինակը տեսանք որ նուե-
րը ցորեն և ուրիշ արմուքը կըրելով ամառը անցու-
ցին , ժամանակին ձեռքերնին չի հասաւ Կոստան-
դնուպօլսոյ փայտ և ածուխ անգամ բերելու . և
այն ձմեռը ածուխն մէկ հօխան մինչեւ երեք զու-
ռուշ ծախուած ըլլալը լսեցինք : Այս տարուան
Եւրոպայի արմուտաց առատութիւնը կը յուսացը-
նէ որ՝ օսմանեան երկրներուն արմուքներէն զատ
ուսաց երկրն ցորեններն ալ Եւրոպա շատ ստակ
չընելով Կոստանդնուպօլսոյ կուգան . և մենք ալ ա-
ռատութիւն կը տեսնենք :

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳՐԻՍ

Պրոսայի Յովհաննէս

Չամբաճեանց :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԻՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԿԱԵԼՍԻՍԵԱՆ

Ի ՎԵՐԻՐ ԽԱՆՆ